KONRAD ADENAUER STIFTUNG

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«ԿՈՆՐԱԴ ԱԴԵՆԱՈՒԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հեղինակներ՝

Առաքելյան Ս.Վ.- իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

Մարգարյան Ա.Ռ. - իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ

Գիտական խմբագիր՝

Ղազինյան Գ.Ս. - իրավ. գիտ. դոկտոր, էմերիթուս պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԵՐԵՎԱՆ 2026

ՀՏԴ **342.8(479.25):343.41**
ԳՄԴ **67.400.8(5Հ)+67.408.114.16**
Ա 706

**Երաշխավորվել է հրատարակության
Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի կողմից**

**Ընտրական և հանրաքվեին մասնակցելու
իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը
Հայաստանի Հանրապետությունում:
Ս.Վ.Առաքելյան, Ա.Ռ.Մարգարյան: Եր.:
Արդարադատության ակադեմիա, 2026. – ... էջ:**

Աշխատությունում գիտագործնական վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական գործող (նոր) օրենսգրքով նախատեսված՝ ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքների իրականացման հետ կապված հանցագործությունների որակման առանձնահատկությունները և մեկնաբանվել են հանցավոր այդ արարքները նախատեսող բոլոր հոդվածները:

Այն կարող է օգտակար լինել իրավակիրառողների, Արդարադատության ակադեմիայի դասընթացավարների, ունկնդիրների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների, ուսանողների, ինչպես նաև քրեական իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

**Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատու է
ՀՀ արդարադատության ակադեմիան:**

© Առաքելյան Ս.Վ., 2026
© Մարգարյան Ա.Ռ., 2026
© «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ, 2026
© Արդարադատության ակադեմիա, 2026

ՀՏԴ **342.8(479.25):343.41**
ԳՄԴ **67.400.8(5Հ)+67.408.114.16**
ISBN 978-9939-1-2267-0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§1.1. Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 210) 8

§1.2. Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 211) 25

§1.3. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 212) 31

§1.4. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 213) 34

§1.5. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 214) 40

§1.6. Քվեարկության գաղտնիությունը խախտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 215) 45

§1.7. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ հանձնելը կամ դրանք իրացնելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 216) 49

§1.8. Ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ առարկաները հափշտակելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 217) 53

§1.9. Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 222) 56

§1.10. Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 223) 59

§1.11. Ձենքով տեղամասային կենտրոն մուտք գործելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 224) 61

§1.12. Ընտրություններին մասնակցող թեկնածուին ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից հրաժարվելուն հարկադրելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 224.1) 64

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§2.1. Ընտրակաշառք ստանալը (ՀՀ քր. օր.-ի հոդված 218) 69

§2.2. Ընտրակաշառք տալը (ՀՀ քր. օր.-ի հոդված 219) 72

§2.3. Ընտրակաշառքի միջնորդությունը (ՀՀ քր. օր.-ի հոդված 220) 73

§2.4. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 221) 76

§2.5. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 221.1) 79

ՆԱԽԱԲԱՆ

Աշխատությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված առավել տարածված հանցագործությունների (ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքների իրականացման հետ կապված) խումբը կազմող հանրորեն վտանգավոր արարքների համար պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերի գիտագործնական մեկնաբանությանը: Այդ առումով քրեական օրենսդրության իրավակարգավորումների գործնական կիրառման արդյունավետությանը նպաստելու նպատակով սույն ձեռնարկում վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական գործող օրենսգրքով նախատեսված՝ ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքների իրականացման հետ կապված ընդհանուր բնույթի և կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները և մեկնաբանվել են հանցավոր այդ արարքները նախատեսող բոլոր հոդվածները: Մեկնաբանություններն իրականացվել են հետևյալ տրամաբանությամբ. որոշակի հերթականությամբ (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտիվ կողմ, սուբյեկտ, ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներ) անդրադարձ է կատարվել համապատասխան հանցակազմերի հատկանիշների գիտագործնական վերլուծությանը և մեկնաբանությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով որոշակի իրավիճակներում արարքների որակման առանձնահատկություններին: Ընդ որում, առաջարկվող որակման այս կամ այն տարբերակը նպատակ է հետապնդում կողմնորոշելու ընթերցողին որոշակի իրավիճակներում արարքներին իրավաբանական գնահատական տալու հարցում: Հեղինակների դիրքորոշումներն այդ կապակցությամբ չեն կարող հիմք ընդունվել որպես հնարավոր միակ ճշգրիտ լուծումներ: Դրանք, ըստ անհրաժեշտության, կարող են նաև վիճարկվել և սեփական հիմնավորումներով պարզաբանվել, գնահատվել ու կիրառվել:

Առաքելյան Սերգեյ Վահանի
Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՆԱԽԱԲԱՆ

Demokratie kennt grundsätzlich keine geografischen Grenzen und ist ein weltweites Phänomen. Obwohl sie vielerorts unter Druck steht, gibt es auf allen Kontinenten funktionierende Demokratien – etwa in Japan, Argentinien, Deutschland oder Armenien. Und obwohl jede Gesellschaft ihren eigenen Zugang und ihre eigene Form der Demokratie finden muss, verbindet sie doch ein gemeinsamer Grundsatz: Gemäß der Verfassung geht alle Staatsgewalt vom Volk aus. Der Volkswille als Kern demokratischer Legitimation kann sich auf vielfältige Weise ausdrücken, doch seine wichtigste und sichtbarste Form sind freie, faire und kompetitive Wahlen. Dieses „Hochamt“ der Demokratie benötigt daher besonderen Schutz.

Die Stimmen der Wählerinnen und Wähler sind stets umkämpft, und viele Formen dieses Wettbewerbs sind nicht nur legitim, sondern essenziell: politische Überzeugungsarbeit, Parteikampagnen und öffentliche Debatten. Andere Formen der Einflussnahme bewegen sich in einer Grauzone, während wiederum andere eindeutig strafbar sind – etwa illegitimer Druck, Fälschung oder Manipulation. Geschichte und Gegenwart zeigen uns, dass Demokratien verletzlich sind. Sie können erodieren, beschädigt werden oder sogar verloren gehen. Deshalb müssen sie wehrhaft sein und sowohl gesellschaftlich als auch institutionell fest verankert werden.

Diese Publikation widmet sich genau diesem Thema: dem Schutz der Demokratie an ihrem zentralen Punkt – freien und fairen Wahlen. Sie analysiert sorgfältig die verschiedenen Erscheinungsformen von Wahlstraftaten in der Republik Armenien und bietet zugleich praktische Ansätze zur Prävention, Aufklärung und Verfolgung solcher Delikte. Damit soll sie einen wichtigen Beitrag zur demokratischen Selbstbehauptung leisten.

Als Konrad-Adenauer-Stiftung im Südkaukasus hoffen wir, mit dieser Studie nicht nur ein informatives, sondern auch ein praxisrelevantes Instrument bereitzustellen – für Juristen, Wahlorganisatoren, Entscheidungsträger und alle, die sich der Stärkung demokratischer Institutionen verpflichtet fühlen. Unser Ziel ist es, den Schutz freier und fairer Wahlen in Armenien zu unterstützen und partnerschaftlich dazu beizutragen, dass Armenien auch langfristig ein Mitglied im weltweiten Kreis funktionierender Demokratien bleibt.

Ժողովրդավարությունը սկզբունքորեն աշխարհագրական սահմաններ չի ճանաչում և համաշխարհային երևույթ է: Շատ տեղերում ճնշման ենթարկվելով հանդերձ, աշխարհի բոլոր մայրցամաքներում կան գործող ժողովրդավարություններ՝ օրինակ, Ճապոնիայում, Արգենտինայում, Գերմանիայում կամ Հայաստանում:

Եվ չնայած յուրաքանչյուր հասարակություն պետք է գտնի ժողովրդավարության իր սեփական մոտեցումն ու ձևը, այդուհանդերձ, հասարակություններին միավորում է մեկ ընդհանուր սկզբունք. սահմանադրության համաձայն՝ ամբողջ պետական իշխանությունը բխում է ժողովրդից: Ժողովրդի կամքը, որպես ժողովրդավարական լեգիտիմության հիմք, կարող է արտահայտվել տարբեր ձևերով, սակայն դրա ամենակարևոր և ամենատեսանելի դրսևորումը ազատ, արդար և մրցակցային ընտրություններն են: Ժողովրդավարության այս «բարձրագույն արարողությունը» հետևաբար կարիք ունի հատուկ պաշտպանության:

Ընտրողների ձայների համար մշտական պայքար է գնում, և այդ մրցակցության բազմաթիվ ձևեր ոչ միայն օրինական են, այլև էական՝ քաղաքական համոզման աշխատանք, կուսակցական քարոզարշավներ, հանրային բանավեճեր: Ազդեցության որոշ այլ ձևեր գտնվում են «գորշ գոտում»: Կան նաև այնպիսիք, որոնք միանշանակորեն քրեորեն պատժելի են՝ անօրինական ճնշում, կեղծում կամ մանիպուլյացիա: Պատմությունն ու ներկան ցույց են տալիս, որ ժողովրդավարությունները խոցելի են: Դրանք կարող են աստիճանաբար թուլանալ, խաթարվել կամ նույնիսկ վերանալ: Հետևաբար դրանք պետք է լինեն դիմակայուն և ամրապնդված թե՛ հասարակական, թե՛ ինստիտուցիոնալ մակարդակում:

Սույն հրապարակումը նվիրված է հենց այս թեմային՝ ժողովրդավարության պաշտպանությանն իր առանցքային կետում՝ ազատ և արդար ընտրություններում: Այն մանրակրկիտ վերլուծում է Հայաստանի Հանրապետությունում ընտրական հանցագործությունների տարբեր դրսևորումները և միաժամանակ առաջարկում գործնական մոտեցումներ նման իրավախախտումների կանխարգելման, բացահայտման և հետապնդման համար: Դրանով այն կոչված է կարևոր ներդրում ունենալու ժողովրդավարության ինքնահաստատման գործում:

Որպես Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հարավկովկասյան գրասենյակ՝ մենք հույս ունենք, որ այս ուսումնասիրությունը կծառայի ոչ միայն որպես տեղեկատվական, այլ նաև որպես գործնականորեն կիրառելի գործիք՝ իրավաբանների, ընտրությունների կազմակերպիչների, որոշում կայացնողների և բոլոր նրանց համար, ովքեր նվիրված են ժողովրդավարական հաստատությունների ամրապնդմանը: Մեր նպատակն է աջակցել Հայաստանում ազատ և արդար ընտրությունների պաշտպանությանը և գործընկերային ձևով նպաստել նրան, որ Հայաստանը նաև երկարաժամկետ հեռանկարում մնա գործող ժողովրդավարությունների համաշխարհային շրջանակի անդամ:

Յակոբ Կյոլլենշտայն

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավար

ԳԼՈՒԽ 1.
ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§1.1. Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 210)

ՀՀ Սահմանադրության հոդված 2-ը սահմանում է՝

«Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»:

Սահմանադրության հոդված 7-ի (Ընտրական իրավունքի սկզբունքները) համաձայն՝ «Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»:

Հիմնական օրենքի հոդված 48-ը (Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը) սահմանում է՝

1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների նախապատրաստման, կազմակերպման ու անցկացման հետ կապված հարցերը կարգավորվում են «ՀՀ ընտրական օրենսգիրք» և «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքներով, ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 210-ով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում *ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացման, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների աշխատանքների և ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացման* ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Տվյալ հանցագործությունից տուժող կարող է հանդիսանալ ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձը (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող՝ ՀՀ քաղաքացիություն չունեցող), ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամը, թեկնածուն, այցելուն, լիազոր ներկայացուցիչը, հանրաքվեի

նախաձեռնող խմբի ներկայացուցիչը, վստահված անձը, դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձը, տեխնիկական սարքավորումը սպասարկող անձը:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը երկընտրելի է և բնութագրվում է հետևյալ արարքներից որևէ *մեկի կամ մի քանիսի* կատարմամբ՝

1. անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացումը խոչընդոտելով,
2. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելով,
3. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելով:

Խոչընդոտել ասելով՝ նշված բոլոր դեպքերում պետք է հասկանալ ցանկացած եղանակով որոշակի արգելքներ, խոչընդոտներ ստեղծելը: Այն կարող է դրսևորվել տարբեր կերպ և, բնականաբար, սկզբունքորեն անհնար է կանխատեսել կամ փորձել սպառիչ թվարկել դրա դրսևորման հնարավոր բոլոր տարբերակները: Ամեն դեպքում, խոչընդոտելը ենթադրում է այնպիսի գործողությունների կատարում, որոնք նպատակ ունեն տարբեր միջոցներով *ազդել նշված իրավունքների կամ պարտականությունների իրականացման վրա* այնպես, որ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձը հնարավորություն չունենա ազատորեն մասնակցել համապատասխան գործընթացին: Օրինակ՝ երբ, ստույգ իմանալով, որ անձը ցանկանում է ընտրել հանցավորի համար ոչ նախընտրելի թեկնածուի, որևէ կերպ (բռնության սպառնալիք գործադրելով, շանտաժով, ազատությունից զրկելով, նյութապես շահագրգռելով, տրանսպորտային միջոցը փչացնելով և այլն) արգելք է ստեղծում ընտրատեղամաս նրա մուտք գործելու կամ քվեարկելու համար:

Ընդ որում, քննարկվող հանցակազմի առկայության համար նշանակություն չունի, թե երբ կամ որտեղ է դրսևորվել խոչընդոտելու փաստը՝ տանից դուրս գալի՞ս, ընտրատեղամաս ուղեվորվելի՞ս, այնտեղ մուտք գործելի՞ս, թե՞ հենց ընտրատեղամասում, քվեախցիկում, քվեատուփի մոտ և այլն: Այսպես, արարքը ՀՀ քր. օր.-ի հոդված 210-ով պետք է որակել նաև այն դեպքերում, երբ, օրինակ՝ հանցագործությունից տուժողին արգելափակում են տանը կամ ավտոմեքենայում՝ բացառելով դեպի ընտրական տեղամաս նրա ուղևորվելը:

Քննարկվող հանցակազմի իմաստով *ընտրական հանձնաժողով* ասելով՝ պետք է հասկանալ համապատասխան օրենսդրական ակտերով նախատեսված բոլոր ընտրական և հանրաքվեի հանձնաժողովները: Այսպես, «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) հոդված 36-ի 1-ին մասի համաձայն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողով,
2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և
3. Տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Համանման հանձնաժողովների կազմավորման համակարգեր են նախատեսված նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Հանրաքվեի մասին օրենք) 15-րդ և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածներով:

Հետևաբար, քննարկվող հանցակազմի առկայության իմաստով որևէ նշանակություն չունի, թե կոնկրետ որ հանձնաժողովի աշխատանքներն են խոչընդոտվել:

Ընտրական կամ հանրաքվեի *հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելը* ևս կարող է կատարվել տարբեր եղանակներով: Օրինակ՝ հանձնաժողովի նիստերի դահլիճ մուտք գործելով և աղմկելով կամ այլ այնպիսի գործողություններ կատարելով, որոնց հետևանքով հանձնաժողովի աշխատանքը խափանվում է, կամ՝ էլեկտրաէներգիայի կամ ջրամատակարարման խափանումներ առաջացնելով կամ այլ գործողություններով այնպիսի պայմաններ ստեղծելով,

որոնց հետևանքով հանձնաժողովի աշխատանքները տվյալ պահին անհնարին են դառնում կամ ոչ լիարժեք են իրականացվում և այլն:

Միևնույն ժամանակ, քննարկվող հանցավոր արարքի կատարման կոնկրետ դրսևորումը բացահայտելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է մանրամասն վերլուծել ընտրությունների կամ հանրաքվեի նախապատրաստման, կազմակերպման և անցկացման կանոնները կարգորոշող համապատասխան նորմատիվ փաստաթղթերը: Մասնավորապես, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքների հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի, տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգող իրավադրույթները տեղ են գտել ոչ միայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» և «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքներում և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում, այլև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ որոշումներում:

Առանձին ուշադրության է արժանի նաև ընտրական կամ հանրաքվեի գործընթացները լուսաբանող լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու քրեաիրավական գնահատականը: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 237-ը պատասխանատվություն է սահմանում *լրագրողին տեղեկություն տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելու կամ նրա մասնագիտական օրինական գործունեությունն այլ կերպ խոչընդոտելու* համար:

[1]Քննարկվող որոշումները, օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց և Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մուտքագրվելուց հետո, համապետական ընտրությունների ժամանակահատվածում՝ նույն օրը, իսկ մյուս ընտրությունների դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, տեղադրվում են ԿԸՀ՝ http://elections.am պաշտոնական կայքէջում:

[2]Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս լրագրողն իրավունք ունի՝ 1) հավաքել և հրապարակել լուրեր ու տեղեկություններ, 2) հրաժարվել նյութ պատրաստելուց, եթե այն հակասում է իր համոզմունքներին, 3) չստորագրել իր գրած հոդվածը կամ պատրաստած նյութը, որի բովանդակությունն աղավաղված է խմբագրի կամ խմբագրության կողմից, 4) ձայնագրել, լուսանկարել, շարժանկարել և արձանագրել այլ միջոցներով, եթե դա արգելված չէ գործող օրենսդրությամբ, 5) լրագրողի վկայականով ներկա լինել հանրահավաքներին, ցույցերին, այլ միջոցառումներին, դատավարություններին և գտնվել տարերային աղետների վայրերում՝ օրենքով սահմանված կարգով, 6) ունենալ ծածկանուն:

Տվյալ դեպքում, ըստ էության, առկա է քրեական օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցություն, որի պարագայում, ՀՀ քր. օր.-ի հոդված 52-ի 5-րդ մասի համաձայն՝ արարքը որակվում է միայն հատուկ նորմով: Այսինքն՝ հավատարմագրված լրագրողի կողմից, օրինակ՝ ընտրատեղամասում քվեարկության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ հավաքելը և հրապարակելը խոչընդոտելու դեպքում հանցագործությունը պետք է որակել միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 210-ով:

Քր. օր.-ի հոդված 210-ով նախատեսված հանցակազմը ձևական է. հանցագործությունն *ավարտված է* համարվում անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը *ցանկացած եղանակով խոչընդոտելու* պահից: Փաստացի որևէ հետևանքի առաջացումն արարքի որակման առումով նշանակություն չունի:

Արարքը որպես ավարտված հանցագործություն որակելու համար *որևէ նշանակություն չունի* նաև. տուժողին արդյոք հաջողվել է հաղթահարել հանցավորի առաջացրած խոչընդոտը և իրականացնել իր համապատասխան իրավունքները կամ պարտականությունները, թե՞ ոչ: Օրինակ՝ եթե անձին քվեարկելու հնարավորությունից զրկելու նպատակով բնակարանի դուռը կողպում են, սակայն նրան հաջողվում է գտնել երկրորդ բանալին և դուրս գալ տանից ու մասնակցել հանրաքվեին, ապա արարքը պետք է որակել որպես քննարկվող հոդվածով նախատեսված ավարտված հանցագործություն:

Միևնույն ժամանակ, եթե հանցավորի գործողությունների արդյունքում *չի հաջողվում* առաջացնել ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացման խոչընդոտ, ապա արարքը պետք է որակել որպես քր. օր.-ի հոդված 210-ով նախատեսված հանցագործության փորձ: Օրինակ՝ արարքն այդպես է որակվում, եթե քվեարկությանն անձի մասնակցությունը բացառելու նպատակով հանցավորը նրա թեյի բաժակի մեջ

խաբեությամբ քնաբեր դեղամիջոց է լցնում, սակայն այն չի ազդում այնպես, որ զրկի տանից դուրս գալու և ընտրատեղամաս ուղևորվելու ու քվեարկելու հնարավորությունից:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է *միայն ուղղակի* դիտավորությամբ:

Հարկ է նշել նաև, որ այն դեպքերում, երբ հանցավորի դիտավորությունն ընդգրկում է մեկից ավելի անձանց ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը խոչընդոտելու հանգամանքը, արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ կախված հանցագործությունից տուժողների քանակից: Օրինակ՝ եթե հանցավորը ցանկանում է խոչընդոտել բազմաբնակարան շենքի տվյալ մուտքում բնակվող և ընտրելու իրավունք ունեցող քսան անձի ընտրական իրավունքի իրականացումը, և այդ նպատակով շենքի մուտքի դռան մոտ կանգնեցնում է սարսափազդու արտաքինով շուն, ապա նրա արարքը պետք է որակել քննարկվող հոդվածով նախատեսված քսան հանցագործության կատարում:

Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելու սուբյեկտն ընդհանուր է՝ *16 տարին* լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Քր. օր.-ի հոդված 210-ի 2-րդ մասով նախատեսված են քննարկվող հանցագործության *ծանրացնող հանգամանքները*. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1. շանտաժով,
2. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,
3. նյութապես շահագրգռելով,
4. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի կամ անդամի կողմից,
5. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայ-

մանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

6) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

1) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը շանտաժով կատարելը.

Քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ շանտաժը անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու *սպառնալիքն է:* Օրինակ՝ երբ ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու նպատակով հանցավորը սպառնում է հրապարակել ընտրողի կամ ընտրական հանձնաժողովի անդամի կամ նրա մերձավոր ազգականի արտամուսնական կապի կամ որևէ վարակիչ հանրավտանգ հիվանդությամբ տառապելու վերաբերյալ տեղեկություններ: Ընդ որում, արարքի որակման առումով որևէ նշանակություն չունի՝ նշված տեղեկություններն իրականությանը համապատասխանու՞մ են, թե՞ ոչ: Այսինքն՝ այդպիսին կարող է համարվել նաև մտացածին, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակման սպառնալիքը, որոնց մասին այլ անձանց հայտնի դարձնելու փաստն իսկ կարող է վնաս պատճառել տուժողին:

2) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով կատարելը.

Այդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ *մերձավոր ազգական է՝* անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

Նույն հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն՝ *մերձավոր է* յուրաքանչյուր ոք, որի կյանքը, առողջությունը, շահերը կամ բարեկեցությունը կարևոր են անձի համար՝ պայմանավորված այդ անձի հետ ունեցած անձնական հարաբերություններով: Այդպիսիք են, օրինակ՝ այլ ազգականը, ընկերը կամ ընկերուհին, փեսացուն կամ հարսնացուն, սիրեկանը կամ սիրուհին և այլն:

Սպառնալիքը, ընդհանուր առմամբ, որևէ չարիք, անախորժություն, վնաս պատճառելու խոստումն է, դրանով մարդուն վախեցնելը: Այն կարող է դրսևորվել միայն *գործողությամբ:* Որպես այդպիսին՝ տվյալ դեպքում կարող է համարվել անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ *բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու* սպառնալիքը: Ընդ որում, այն միշտ պետք է կոնկրետ բնույթ կրի և տուժողի կողմից ընկալվի որպես իրական, իրեն որոշակի վնաս պատճառելու ունակ:

Բռնություն գործադրելու սպառնալիքը ենթադրում է այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելու կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելու մոտալուտ հնարավորության կապակցությամբ վախ, երկյուղ ներշնչելը: Օրինակ՝ հարվածելու, ծեծի ենթարկելու, մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելու իրական սպառնալիք գործադրելը և այլն: Ընդ որում, տվյալ դեպքում արարքը որակվում է *միայն քր. օր.-ի հոդված 210-ի 2-րդ մասի 2-րդ կետով:*

Այս առումով որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս բռնություն գործադրելը որպես քննարկվող հանցագործության (ինչպես նաև ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքների իրականացման հետ կապված մյուս հանցագործությունների) ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանքների շարքում օրենսդրի կողմից չնախատեսելը: Բանն այն է, որ օրենսդրական նման կարգավորման պարագայում արարքը բռնություն գործադրելով կատարելը մի շարք դեպքերում պետք է որակել որպես համապատասխան հանցագործության հասարակ տեսակ, իսկ նույն բռնությունը գործադրելու սպառնալիքով կատարելը՝ ծանրացնող հանգամանք: Օրինակ՝ ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը ապտակելով, հարվածներ հասցնելով կամ ֆիզիկական այլ բռնի գործողություններ կատարելով խոչընդոտելը պետք է որակել քր. օր.-ի հոդված 210-ի 1-ին մասով, իսկ նույն արարքները կատարելու սպառնալիքով խոչընդոտելը՝ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է վերլուծել «գույք ոչնչացնել» և «գույք վնասել» հասկացությունները:

Ոչնչացնել ասելով՝ տվյալ դեպքում հարկ է հասկանալ որոշակի ներգործությամբ գույքն այնպիսի վիճակի հասցնելը, որ այն լիովին դառնա ոչ պիտանի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Ընդ որում, գույքը կարող է ինչպես ֆիզիկապես լիովին ոչնչանալ (օրինակ՝ հիմնովին այրվել, փշրվել, ջրի, ծծմբական թթվի մեջ ամբողջովին լուծվել և այլն), այնպես էլ շարունակել ֆիզիկապես մասնակիորեն գոյություն ունենալ, բայց լիովին կորցնել իր որակական որոշակիությունն ու օգտակար հատկությունները (օրինակ՝ երբ տաղավարը վերածվում է մետաղի ջարդոնի և այլն): Այլ կերպ ասած՝ գույքի ոչնչացման հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրա պարագայում ոչ մի միջոցով (վերանորոգում, բուժում և այլն) այլևս հնարավոր չի լինում վերականգնել վերջինիս նախկին վիճակը և օգտագործել այն նպատակային նշանակությամբ (օրինակ՝ վառելափայտի վերածված կահույքը, սատկած կենդանին կամ ձուկը և այլն):

Վնասելը տվյալ դեպքում հասկացվում է որպես գույքի հատկանիշների այնպիսի փոփոխություն, որի դեպքում գույքի վիճակն էականորեն վատթարանում է, դրա օգտակար հատկությունները կամ դրանց զգալի մասը կորսվում են, և գույքն ամբողջությամբ կամ մասնակիորեն դառնում է անպետք՝ նպատակային կամ տնտեսական նշանակությամբ օգտագործելու համար: Այլ կերպ ասած՝ ի տարբերություն ոչնչացման, վնասման պարագայում որոշակի ծախսումներ կատարելով հնարավոր է լինում վերականգնել գույքի որակական հատկանիշները և տնտեսական նշանակությունը: Օրինակ՝ երբ վերանորոգվում է հեռուստացույցը, հեռախոսը կամ տեսանկարահանող սարքը, շարվում է քանդված պատը և այլն:

[1]Տե՛ս նաև Առաքելյան Ս.Վ., Բաղդասարյան Գ.Ս., Պետրոսյան Պ.Դ. Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործնական մեկնաբանություններ): – Եր.: Արդարադատության ակադեմիա,2024 էջեր 182-183:

3) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը նյութապես շահագրգռելով կատարելը.

Նյութապես շահագրգռելը ընտրողին կամ հանրաքվեի մասնակցին, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամին, թեկնածուին, այցելուին, լիազոր ներկայացուցչին, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչին, վստահված անձին, դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձին, տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին դրամական կամ այլ նյութական վարձատրություն տալն է կամ առաջարկելը կամ վարձատրելու խոստումը՝ անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքը կամ ընտրությանը մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով: Օրինակ՝ երբ նյութապես շահագրգռելով՝ անձից պահանջում են չներկայանալ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի

աշխատանքներին կամ հրաժարվել որպես վստահված անձ կամ դիտորդ գրանցվելուց և այլն:

Միևնույն ժամանակ, հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն առաջարկելը, խոստանալը կամ տալը պետք է որակել քր. օր.-ի ոչ թե քննարկվող, այլ 219-րդ (Ընտրակաշառք տալը) հոդվածով:

[1]Տե՛ս նույն աշխ., էջ 183:

4) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի կամ անդամի կողմից կատարելը.

Քր. օր.-ի հոդված 210-ի 2-րդ մասի 4-րդ կետով՝ որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսված է քննարկվող հանցանքը հատուկ սուբյեկտի՝ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի *նախագահի կամ անդամի* կողմից կատարելը: Նշված հանձնաժողովները կազմավորելու հիմունքներն ու կարգը, դրանց նախագահների և անդամների լիազորությունները սահմանված են «ՀՀ ընտրական օրենսգիրք» և «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքներով, ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

5) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորվածազդեցությունն օգտագործելով

Քր. օր.-ի հոդված 3-ի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ *իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը*՝ ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելն է: Ուստի, արարքը քր. օր.-ի հոդված 210-ի 2-րդ մասի 5-րդ կետով պետք է որակվի, օրինակ՝ երբ կրթական հաստատության կամ դրա առանձին ստորաբաժանման ղեկավարը, իր ենթակայության տակ աշխատողների համար արտոնություններ սահմանելու դիմաց, պահանջում է, որպեսզի նրանք և ընտրելու իրավունք ունեցող նրանց հարազատները չմասնակցեն քվեարկությանը:

6) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելը.

Քր. օր.-ի հոդված 50-ի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է *մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ* կատարված, եթե հանցագործությանը մասնակցել են այնպիսի համակատարողներ, որոնք նախքան հանցանքը սկսելը պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին: Նշված իրավակարգավորումից կարելի է հետևություն անել, որ քննարկվող հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, երբ՝

1. երկու և ավելի անձինք (համակատարողներ), գործել են ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումն անմիջականորեն խոչընդոտելուն ուղղված համատեղ դիտավորությամբ,
2. հանցանքը համատեղ կատարելու մասին նրանք պայմանավորվել են նախքան հանցանքն սկսելը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 210-ի 3-րդ մասն *առավել խիստ* պատասխանատվություն է նախատեսում հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն *հարկադրելու* համար, որը կատարվել է՝

1. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,
2. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ
3. նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով:

Հարկադրանքի նշված եղանակներից առաջին երկուսը վերն արդեն մեկնաբանվել են: Այդուհանդերձ, տվյալ դեպքում դրանց էությունն ու առանձնահատկություններն առավել ամբողջական բացահայտելու համար անհրաժեշտ է վերլուծել նաև «հարկադրել» հասկացությունը:

Մասնավորապես, *հարկադրել* ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ հանցագործությունից տուժած անձին իր կամքին հակառակ հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկել կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցել կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվել կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկել պարտադրելը, ստիպելը:

Նյութական կամ այլ կախվածությունն այս դեպքում նշանակում է, որ անձի համապատասխան վիճակի պահպանումը, դրա հնարավոր բարելավումը կամ վատթարացումը կախված են հանցավորից: Նման կախվածության առկայությունը որոշվում է ոչ միայն տուժողի և հանցավորի փոխհարաբերություններն իրավական տեսանկյունից պայմանավորող հանգամանքներով, այլև նրանց միջև գոյություն ունեցող փաստական հարաբերություններով:

Համապատասխանաբար, *նյութական կախվածությունն* առկա է ոչ միայն այն դեպքում, երբ տուժողն ամբողջովին կախված է հանցավորից (օրինակ՝ անաշխատունակ ամուսինը՝ աշխատունակից, կամ անչափահաս երեխան՝ ծնողից), այլև՝ երբ ստացվող նյութական օգնությունը կազմում է տուժողի եկամտի քիչ թե շատ մշտական աղբյուրներից մեկը: Ուստի, նշված կախվածության առկայության հարցը միշտ պետք է լուծվի հանցավորի և տուժողի միջև գոյություն ունեցող հարաբերությունների բնույթը և բովանդակությունը հաշվի առնելով:

Այլ կախվածությունը կարող է կապված լինել պաշտոնեական, աշխատանքային, ծառայողական հարաբերությունների, հանցավորի սանը, ուսանողը կամ աշակերտը հանդիսանալու, խնամակալություն կամ հոգաբարձություն իրականացնելու և նման այլ հանգամանքների հետ: Օրինակ՝ նյութական չհանդիսացող այլ կախվածություն կարող է առկա լինել վերադաս-ստորադաս, ուսուցիչ-աշակերտ, դասախոս-ուսանող, մարզիչ-մարզիկ և նման այլ հարաբերությունների պարագայում:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հոդվածով հարկադրանքի *եղանակները* (դրսևորման ձևերը)՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը և նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելը, *սպառիչ* թվարկված են: Այսինքն՝ որևէ այլ եղանակով հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելը չի կարող որակվել հոդված 210-ի 3-րդ մասով:

Քննարկվող հանցակազմի իմաստով *հարկադրելն ավարտված է* համարվում վերը նշված որևէ եղանակով պայմանավորված՝ հանցագործությունից տուժողի կողմից հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու կամ

ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու *համաձայնություն տալու* պահից: Ընդ որում, այդ համաձայնությունը պետք է իրական, այլ ոչ թե ձևական լինի: Բացի դրանից, այդ առումով չի պահանջվում, որպեսզի տուժողը՝ ենթարկվելով հարկադրանքին, նաև փաստացի դրսևորի պարտադրված վարքագիծը, օրինակ՝ հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկի և այլն:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ հանցավորի կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (օրինակ՝ եթե գործադրած ներգործությունը որևէ ազդեցություն չի ունենում, և անձը բացահայտ հրաժարվում է կատարել հանցավորի պահանջը կամ ձևական համաձայնություն է տալիս) նրան *չի հաջողվում պարտադրել, ստիպել* տուժողին որոշակի վարքագիծ դրսևորելու համաձայնություն տալ, արարքը պետք է որակել քր. օր.-ի հոդվածներ 44–210-ի 3-րդ մասով՝ որպես հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն *հարկադրելու փորձ*:

Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելու *ամենավտանգավոր* տեսակը նախատեսված է քր. օր.-ի հոդված 210-ի 4-րդ մասով: Այն է՝ նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է *հանցավոր կազմակերպության* կողմից:

ՀՀ քր. օր.-ի հոդված 50-ի 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է *հանցավոր կազմակերպության կողմից* կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Ընդ որում, պարտադիր չէ, որ նշված խումբը կամ խմբերի միավորումը ստեղծված լինի միայն ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի հետ կապված հանցանքներ կատարելու համար: Այսպես, օրինակ՝ արարքը քր. օր.-ի հոդված

210-ի 4-րդ մասով պետք է որակել նաև այն դեպքում, երբ կազմակերպությունների վրա հարձակումներ կատարելու նպատակով ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խումբը միաժամանակ խոչընդոտի մեկ անձի ընտրական իրավունքի կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող այլ անձի իրավունքների կամ պարտականությունների իրականացումը:

Բացի դրանից, ի տարբերություն մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու դեպքերի՝ քննարկվող հանցանքը կորակվի որպես հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն պարագայում, երբ իրականացվի դրա թեկուզ մեկ անդամի, կամ, նույնիսկ, խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձի կողմից: Այս դեպքերում համակատարումը պարտադիր չէ:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է նախատեսված, մի կողմից, հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու (հոդված 318), մյուս կողմից՝ հանցավոր կազմակերպությանը մասնակցելու (հոդված 319-ը) համար: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը կատարվում է հանցավոր կազմակերպության կողմից, արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ հոդված 210-ի 4-րդ մասով և, համապատասխանաբար, հոդված 318-ով կամ 319-ով:

§1.2. Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 211)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում ***նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Նախընտրական քարոզչությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) գլուխ 4-ով: Մասնավորապես, նշված օրենքի հոդված 19-ի (Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները) 1-ին մասի համաձայն՝

«Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն:

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի դեպքում նախընտրական քարոզչությունն սկսվում է ընտրության երկրորդ փուլ անցկացնելու մասին որոշման կայացումից հետո՝ ութերորդ օրվանից:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է»:

Նույն հոդվածի 1.1.-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի իմաստով՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին»:

Ընտրական օրենսգրքում տեղ գտած իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նախընտրական քարոզչության ձևերից է նաև *քաղաքական գովազդը*, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ *քվեարկելու կամ չքվեարկելու* որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին: Ընդ որում, այն ներառում է նաև ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ:

Քաղաքական գովազդ են համարվում նաև տեսաձայնային հայտարարություններն այն մասին, որ համերգները կամ հանրային այլ միջոցառումներն իրականացվում են կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի աջակցությամբ, կամ որոնք ներառում են թեկնածուի կողմից այդ հանրային միջոցառումներին մասնակցության մասին փաստի հիշատակում:

Նման կարգավորումներ են նախատեսված նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի գլուխ 5-ով և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի գլուխ 5-ով:

Քննարկվող հանցագործությունն օբյեկտիվ կողմից բնութագրվում է՝

1. նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելով կամ
2. նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 211-ի 1-ին մասի դիսպոզիցիայից հետևում է, որ հարկադրանքի կոնկրետ եղանակ (դրսևորման ձև) նախատեսված չէ: Հետևաբար, այդպիսին կարող են համարվել նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն պարտադրելու, ստիպելու հնարավոր բոլոր ձևերը: Միևնույն ժամանակ, սակայն, շանտաժով, անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ

դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ինչպես նաև նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով հարկադրելու դրսևորումները նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված են որպես ծանրացնող հանգամանքներ:

Ինչ վերաբերում է *հարկադրելու* էությանն ու առանձնահատկություններին, ապա դրանք բացահայտվել են սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

Այլ կերպ խոչընդոտել ասելով՝ քննարկվող հանցակազմի իմաստով պետք է հասկանալ հարկադրելու հետ չկապված ցանկացած եղանակով (գործողությամբ կամ անգործությամբ) որոշակի արգելքներ, խոչընդոտներ ստեղծելը, որն ուղղված է նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը բացառելուն կամ դժվարացնելուն: Օրինակ՝ անվայելուչ պահվածքով ընտրողների հետ հանդիպումը տապալելը, ժողովներ, հանդիպումներ և նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով դահլիճներ կամ այլ շինություններ տրամադրելուց անհիմն հրաժարվելը և այլն:

Այդ առումով հետաքրքրության արժանի է Ընտրական օրենսգրքի հոդված 19-ի 2-րդ մասով նախատեսված այն իրավակարգավորումը, որի համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները թեկնածուներին ու ընտրություններին մասնակցող կուսակցություններին կարող են տրամադրվել *միայն* ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին ***և*** *միայն այն դեպքերում,* եթե տվյալ բնակավայրում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն նախընտրական քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ: Ստացվում է՝ նշված կանոնների պահպանմամբ (օրինակ՝ աշխատանքային օրը մինչև ժամը 18:00-ն) նշված դահլիճները տրամադրելը մերժելը չի կարող գնահատվել որպես նախընտրական քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն այլ կերպ խոչընդոտել:

Քր. օր.-ի հոդված 211-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է ձևական հանցակազմով. հանցանքն *ավարտված է* համարվում՝

1. նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու կամ

2. նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտել հանդիսացող արարքը սկսելու պահից:

Հարկ է նկատել նաև, որ քննարկվող հանցակազմի իմաստով կարևորվում է հանցանքը կատարելու ***ժամանակը***: Մասնավորապես, ենթադրվում է, որ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրել կամ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտել հնարավոր է նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության՝ օրենքով նախատեսված ժամանակահատվածում: Օրինակ՝ Ընտրական օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումներից հետևում է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվել է, նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում Ընտրական օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը: Այսինքն՝ նախընտրական քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրել կամ նախընտրական քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտել հնարավոր է նաև, օրինակ՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 3-րդ կամ 4-րդ օրը, կամ՝ քվեարկության և դրան նախորդող օրը, բայց ոչ հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների կամ համացանցում գովազդի միջոցով կամ զանգվածային լրատվության միջոցներով: Հարցը նույն կերպ է լուծվում նաև հանրաքվեի կամ տեղական հանրաքվեի քարոզչության պարագայում:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն *ուղղակի դիտավորությամբ:*

Տվյալ հանցագործության սուբյեկտն ընդհանուր է՝ *16 տարին* լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Քր. օր.-ի հոդված 211-ի 2-րդ մասով, ինչպես արդեն նշվել է, նախատեսված են նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու կամ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելու *ծանրացուցիչ հանգամանքները.* նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1. շանտաժով,
2. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,
3. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
4. նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ
5. մի խումբ անձանց կողմից:

Նշված բոլոր հանգամանքները մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության նախորդ պարագրաֆի շրջանակներում:

§1.3. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 212)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրությունների և հանրաքվեի անցկացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը կամ անմիջականորեն ժողովրդի իշխանության իրականացմանը կամ համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցությանը***:

Հանցագործության **առարկան** ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքներ պարունակող փաստաթղթերն են (քվեաթերթիկները, ընտրողների գրանցման ցուցակները, քվեարկության ամփոփիչ և անճշտությունների վերաբերյալ արձանագրությունները և այլն), որոնց ձևն ու լրացման կարգը սահմանվում են օրենքով, ինչպես նաև համակարգչային համապատասխան տեղեկատվությունը:

Քր. օր.-ի հոդված 212-ով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ընտրությունների կամ քվեարկության արդյունքները ***կեղծելով***, որը դրսևորվում է՝

1. ձայներն ակնհայտ սխալ հաշվելով,

2. ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելով,

3. համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելով կամ մուտքագրված տվյալները փոփոխելով,

4. ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելով,

5. որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելով,

6. ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելով:

Ձայներն ակնհայտ սխալ հաշվելը նշանակում է քվեարկության արդյունքների դիտավորյալ աղավաղում, որն առաջ է բերում «կողմ» կամ «դեմ» քվեարկած ձայների՝ իրականությանը չհամապատասխանող ավելացում կամ պակասեցում: Դա կարող է արտահայտվել, օրինակ՝ մեկ թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկը մեկ ուրիշ թեկնածուի օգտին հաշվելով, ձայները հաշվարկելիս անցանկալի քվեաթերթիկները թաքցնելով, անվավեր քվեաթերթիկներն այս կամ այն թեկնածուի օգտին հաշվելով և այլն:

Ինչ վերաբերում է ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելուն, ապա այն, ինչպես արդեն նշվել է, նախատեսված է որպես քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի ինքնուրույն դրսևորում:

Ընտրությունների արդյունքներն ակնհայտ սխալ հաստատելն արտահայտվում է ընտրություններն օրենքի խախտմամբ դիտավորությամբ կայացած կամ չկայացած, այս կամ այն թեկնածուին ընտրված կամ չընտրված հայտարարելով և այլն: Միևնույն ժամանակ, քր. օր.-ի հոդված 212-ի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ հանրաքվեի արդյունքներն ակնհայտ սխալ հաստատելը դուրս է մնում քննարկվող քրեաիրավական հարաբերության շրջանակներից, ինչին դժվար է համաձայնել: Այդուհանդերձ, վարքագծի նման դրսևորումը նույնպես կարելի է որակել նշված հոդվածով՝ որպես այլ եղանակով քվեարկության արդյունքները կեղծել:

Համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրել կամ մուտքագրված տվյալները փոփոխել ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ այն իրավիճակները, երբ նման գործողությունները կատարվում են ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու, աղավաղելու, իրականությանը չհամապատասխանող տեսքով ներկայացնելու նպատակով:

Հակառակ պարագայում արարքը չի կարող որակվել քր. օր.-ի հոդված 212-ով: Մինչդեռ, քննարկվող հոդվածում տվյալ նպատակի վերաբերյալ մատնանշման բացակայությունը կարող է վեճի տեղիք տալ: Ուստի, այս առումով ևս անհրաժեշտ են օրենսդրական համապատասխան փոփոխություններ:

Ընտրությունների կամ քվեարկության *արդյունքները կեղծելու այլ եղանակներ* կարող են համարվել, օրինակ՝ քվեարկության արդյունքների վրա ազդելու նպատակով պահանջվածից ավելի տպագրված և այս կամ այն թեկնածուի օգտին նախապես քվեարկված քվեաթերթիկներ լցոնելը, անցանկալի թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկները ոչնչացնելը և այլն:

Ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե դա կատարվել է ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով: Հետևաբար, եթե նման արարքի նպատակ հանդիսանա ընտրական գործընթացը խոչընդոտելը, արարքը պետք է որակել քր. օր.-ի ոչ թե քննարկվող, այլ 210-րդ հոդվածով՝ որպես ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը:

Քր. օր.-ի հոդված 212-ով նախատեսված հանցակազմը ձևական է. հանցագործությունն *ավարտված է* համարվում հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները որևէ եղանակով կեղծելու պահից՝ անկախ դրանց արդյունքների վրա որևէ ազդեցություն ունենալուց: Նշված արդյունքները կեղծելու համար որոշակի պայմաններ ստեղծելը, միջոցներ ձեռնարկելը, ինչը հետագայում խափանվել է, որակվում է որպես հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները կեղծելու նախապատրաստություն:

Քննարկվող հանցագործությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է *միայն ուղղակի* դիտավորությամբ:

Հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ *16 տարին* լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Քր. օր.-ի հոդված 212-ի 2-րդ մասով նախատեսված է ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու ***ծանրացնող*** մեկ հանգամանք: Այն է՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Տվյալ ծանրացնող հանգամանքը, ինչպես արդեն նշվել է, մանրամասն պարզաբանվել է սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

§1.4. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 213)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***քաղաքացիների ընտրական իրավունքի և պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Տվյալ հանցագործության **առարկան** ընտրողների համապատասխան ցուցակներն են, որոնցում ընդգրկվում են ընտրական իրավունք ունեցող ՀՀ բոլոր քաղաքացիները: Այդ ցուցակները մշտապես գործող փաստաթղթեր են, որոնք կազմվում են համայնքներում՝ ըստ ընտրական տեղամասերի: Ընտրողների ցուցակները վերանայվում են յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր և հունիս ամիսներին:

Այս առումով, նախ, հարց է առաջանում. արդյոք տվյալ դեպքում պետք է հասկանալ նաև ***հանրաքվեին (այդ թվում՝ տեղական)*** մասնակցելու իրավունք ունեցողների ցուցակները:

Համապատասխանաբար՝ արդյոք հանրաքվեին (այդ թվում՝ տեղական) մասնակցելու իրավունք ունեցողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը կարող է որակվել քր. օր.-ի քննարկվող հոդվածով:

Վերոհիշյալ հարցերին պատասխանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է վերլուծել «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված համապատասխան իրավակարգավորումները:

Մասնավորապես, «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 16-ի 1-ին մասի համաձայն՝ «***Հանրաքվեին մասնակցելու իրավունք*** ունեցող քաղաքացիների ցուցակները կազմելու և վարելու, քաղաքացիներին ցուցակներում ընդգրկելու կարգը, ցուցակներին առաջադրվող պահանջները, ցուցակների մատչելիությունը, ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելու և ցուցակները ճշտելու, հանձնաժողովներին ցուցակներ տրամադրելու կարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով՝ *Ազգային ժողովի ընտրությունների համար սահմանված կարգին* համապատասխան»:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի 1-ին մասի համաձայն՝ «***Տեղական հանրաքվեին մասնակցելու*** իրավունք ունեցող անձանց ցուցակները (այսուհետ՝ ցուցակներ) կազմելու և վարելու, անձանց ցուցակներում ընդգրկելու, ցուցակներին առաջադրվող պահանջները, ցուցակների մատչելիությունը, ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելու և ցուցակները ճշտելու, ընտրական հանձնաժողովներին ցուցակներ տրամադրելու կարգը սահմանվում են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ ***տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ*** ընտրողների ցուցակները կազմելուն, վարելուն, անձանց ընտրողների ցուցակներում ընդգրկելուն, ընտրողների ցուցակներին առաջադրվող պահանջներին, ցուցակների մատչելիությանը, ցուցակների

անճշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելուն, ցուցակները ճշտելուն և հրապարակման համար ցուցակները տրամադրելուն վերաբերող ***դրույթներով սահմանված*** կարգով»:

Վերը ներկայացված իրավակարգավորումների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ «ընտրողների ցուցակներ» և «հանրաքվեին (այդ թվում՝ տեղական) մասնակցելու իրավունք ունեցողների ցուցակներ» հասկացությունները կարող են նույնացվել: Հետևաբար, վերջիններս կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը նույնպես կարող է որակվել քր. օր.-ի հոդված 213-ով:

Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ընտրողների ցուցակները (այդ թվում՝ հանրաքվեին կամ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների ցուցակները)՝

1. քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելով,
2. քաղաքացիներին և կուսակցություններին սահմանված կարգով չտրամադրելով,
3. սահմանված կարգով չհրապարակելով:

'Այդուհանդերձ՝ տվյալ հարցի լուծումը շարունակում է վիճելի լինել: Ուստի, տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու և իրավական որոշակիության սկզբունքն ապահովելու նպատակով անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ:

Ընտրողների ցուցակները կազմելու և վարելու, քաղաքացիներին և կուսակցություններին դրանք տրամադրելու, ինչպես նաև այդ ցուցակները հրապարակելու ***կարգն ու պայմանները***, դրանք կազմելու համար ***պատասխանատու անձանց*** շրջանակը սահմանված են «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով:

Մասնավորապես, նշված օրենսգրքի գլուխ 2-ը (Ընտրողների ցուցակները) նախատեսում է ընտրողների ռեգիստրը վարելու և ընտրողների ցուցակները կազմելու (հոդված 9), ընտրողներին ցուցակում ընդգրկելու (հոդված 10), ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջների (հոդված 11),

ընտրողների ցուցակներն ընտրական հանձնաժողովներին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրելու (հոդված 12), ընտրողների ցուցակների մատչելիության (հոդված 13), ընտրողների ցուցակների անճշտությունները վերացնելու վերաբերյալ դիմումներ տալու, դիմումները քննարկելու և ընտրողների ցուցակների անճշտությունները վերացնելու կարգի (հոդված 14), ինչպես նաև քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի (հոդված 15) հետ կապված իրավակարգավորումները:

Համապատասխանաբար, նույն կերպ պետք է մեկնաբանել նաև հանրաքվեին կամ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների ցուցակները կազմելու և վարելու, քաղաքացիներին և կուսակցություններին դրանք տրամադրելու, ինչպես նաև այդ ցուցակները հրապարակելու կարգն ու պայմանները, ինչպես նաև դրանք կազմելու համար պատասխանատու անձանց շրջանակը:

Քննարկվող հանցագործությունը նախատեսված է **ձևական** հանցակազմով. այն ***ավարտված է*** համարվում վերը նշված արարքներից մեկը կամ մի քանիսը կատարելու (այդ կապակցությամբ Ընտրական օրենսգրքով սահմանված որևէ խախտում թույլ տալու) պահից՝ անկախ որևէ հետևանքից: Օրինակ՝ եթե լիազոր մարմինը հունիս կամ նոյեմբեր ամսվա առաջին մեկ շաբաթվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը՝ ըստ համայնքների, էլեկտրոնային եղանակով չի ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար:

[1]Տվյալ գործառույթն իրականացնող լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետություն ներքին գործերի նախարարության ***միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն*** է:

Կամ՝ եթե միևնույն անձը միտումնավոր (այլ ոչ թե՝ սխալմամբ, պատասխանատու անձի անփութության, անբարեխղճության հետևանքով) ընդգրկվում է ընտրողների մեկից ավելի ցուցակներում: Ընդ որում, եթե տվյալ արարքը կատարվում է համապատասխան ընտրողի կողմից մեկից ավելի անգամ քվեարկելու համար պայմաններ ստեղծելու նպատակով, ապա այն պետք

է որակել հանցագործությունների համակցությամբ: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 213-ով և 43–214-ով՝ որպես ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտել և մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու նախապատրաստություն:

Միևնույն ժամանակ, եթե, օրինակ՝ քաղաքացին չի ընդգրկվում ընտրողների ցուցակում առաջիկա ընտրություններին կամ հանրաքվեին նրա մասնակցությունը բացառելու նպատակով, ապա արարքը պետք է որակել միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 210-ի 5-րդ մասով՝ որպես ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով խոչընդոտել: Բանն այն է, որ ընտրողների (կամ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների) ցուցակները կազմելու կարգը խախտելը տվյալ դեպքում ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրակա-նացումը ծանրացնող նշված հանգամանքով խոչընդոտելու բաղկացուցիչ մաս է, որի համար ավելի մեղմ (այլ ոչ թե՝ հավասար կամ ավելի խիստ) պատիժ է նախատեսված: Արարքի նման որակումն ուղղակիորեն բխում է ՀՀ քր. օր.-ի հոդված 52-ի (Հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցությունը և դրա տեսակները) 6-րդ մասով սահմանված իրավակարգավորումից:

Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի*** դիտավորությամբ:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտը** հատուկ է՝ ընտրողների ցու-ցակներ կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձը: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի հոդված 9-ի 2-րդի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և

ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար»: Նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է՝ «Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների պետերը, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զորամասերի հրամանատարները»:

ՀՀ քր. օր.-ի հոդված 213-ի 2-րդ մասն **առավել խիստ** պատասխանատվություն է նախատեսում ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու անձի կողմից ընտրողների ցուցակները ***կեղծիք կատարելով կազմելու*** կամ ընտրողների ցուցակներում ***կեղծիք կատարելու*** համար: Տվյալ դեպքում հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ:

Ընտրացուցակներում ***կեղծիքներ կատարելը*** դրսևորվում է՝ գիտակցաբար դրանցում իրականությանը չհամապատասխանող (կեղծ) տվյալներ մուտքագրելով, այդ ցուցակների իրական պատկերն այլ կերպ աղավաղելով: Օրինակ՝ երբ ընտրական իրավունք ունեցող միևնույն քաղաքացին ընդգրկվում է ընտրողների միաժամանակ երկու կամ ավելի ցուցակներում, կամ՝ երբ այդ ցուցակներում գիտակցաբար ընդգրկվում են մահացած կամ տվյալ համայնքում չգրանցված քաղաքացիներ և այլն: Ընդ որում, համապատասխան պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որը դրսևորվում է միայն ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու միջոցով, քր. օր.-ի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության ուժով, որակվում է միայն քր. օր.-ի հոդված 213-ով:

§1.5.Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 214)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 66-ի (Ընտրողի ինքնությունը ստուգելը, ընտրողների գրանցումը), 2-րդ մասի համաձայն՝ «ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ. լիազորված քվեարկությունն արգելվում է»:



Նույն օրենսգրքի հոդված 79-ի համաձայն՝ «Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայն»: Նմանաբովանդակ իրավակարգավորումներ են պարունակում նաև Ընտրական օրենսգրքի հոդված 106-ը (համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների պարագայում), 125-ը (համամասնական ընտրակարգով համայնքների ավագանիների ընտրությունների պարագայում), ինչպես նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 2-ը (Հանրաքվեն և դրա անցկացման սկզբունքները) և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ը (Տեղական հանրաքվեն և դրա անցկացման սկզբունքները):

Օբյեկտիվ կողմից ՀՀ քր. օր.-ի հոդված 214-ով նախատեսված հանցագործությունը բնութագրվում է ընտրությունների կամ հանրաքվեի ընթացքում *մեկից ավելի անգամ* կամ *այլ անձի փոխարեն* քվեարկելով: Ընդ որում, նշված հոդվածով նախատեսված են նաև տվյալ հանցագործության եղանակները՝

1. կեղծ տվյալներ հայտնելը,
2. կեղծ փաստաթուղթ ներկայացնելը,
3. որևէ այլ ապօրինի եղանակ:

Կեղծ տվյալներ հայտնելն առկա է, երբ հանցավորը իրականությանը չհամապատասխանող, աղճատված տեղեկություններ հաղորդելով, մոլորության մեջ է գցում պատասխանատու անձին (օրինակ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին)՝ ընտրողների ցուցակում գրանցվելու և քվեարկությանը մասնակցելու նպատակով: Քննարկվող հանցագործության տվյալ դրսևորումն առկա է, օրինակ՝ երբ արդեն իսկ քվեարկած անձը կրկին ներկայանում է ընտրատեղամաս և, իր եղբորը վերաբերող տվյալներ հաղորդելով՝ նրա անձնագրով կրկին գրանցվում ու մասնակցում է քվեարկությանը:

Կեղծ փաստաթուղթ ներկայացնելը ևս քննարկվող հանցագործության եղանակ է, եթե դա կատարվում է ընտրողների ցուցակում ապօրինի գրանցվելու և քվեարկությանը մասնակցելու համար: Օրինակ՝ երբ անձը հաստատող կեղծ

փաստաթուղթ ներկայացնելով՝ հանցավորը հանդես է գալիս տվյալ տեղամասային ընտրատարածքում ընտրելու իրավունք ունեցող մեկ ուրիշ անձի անվան տակ:

Այդ առումով հարկ է անդրադառնալ նաև այն փաստաթղթերին, որոնք ներկայացնելն անհրաժեշտ է քվեաթերթիկ ստանալու և քվեարկությանը մասնակցելու համար:

Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի հոդված 10-ի (Ընտրողներին ցուցակում ընդգրկելը) 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք, որոնք քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ»:

Նույն օրենսգրքի հոդված 66-ի 1-ին մասի համաձայն՝ «Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում ***նույնականացման քարտը, կենսաչափական անձնագիրը, ոչ կենսաչափական անձնագիրը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը***՝ տրված լիազոր մարմնի կողմից, ***քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը***, իսկ զինծառայողների համար՝ ***զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը***, եթե գրանցվում են (քվեարկում են) զորամասի կազմված ընտրողների ցուցակում: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ***քաղաքացիություն չունեցող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ է*** համարվում սույն օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանված փաստաթղթերից որևէ մեկը»:

Բացի դրանից, Ընտրական օրենսգրքի հոդված 52-ի 2-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

23) սահմանում է քաղաքացիություն չունեցող ընտրողների անձը հաստատող այն փաստաթղթերի տեսակները, որոնք կարող են օգտագործվել

տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ.

24) սահմանում է քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողների անձը հաստատող փաստաթղթերի տեսակները.

Հետևաբար՝ հենց ***նշված փաստաթղթերը կեղծված ներկայացնելով*** մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը պետք է որակել քր. օր.-ի հոդված 214-ով:

Միևնույն ժամանակ, ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ ընտրողին քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ (Ընտրական օրենսգրքի հոդված 66-ի 2-րդ մաս):

Ուստի, եթե ընտրողը, օրինակ՝ ներկայացնի վավերականության ժամկետն ավարտված նույնականացման քարտ և չունենա վավերականության ժամկետը չլրացած անձը հաստատող այլ փաստաթուղթ, արարքը չի կարող որակվել որպես հանցագործություն: Մինչդեռ՝ եթե վավերականության ժամկետը չլրացած անձը՝ հաստատող փաստաթուղթ ունեցողը, թաքցնի դրա առկայությունը և կրկնակի քվեարկելու համար ներկայացնի վավերականության ժամկետն ավարտված նույնականացման քարտ, արարքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 214-ով՝ որպես ***կեղծ տվյալներ հայտնել*** կատարված:

Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու *այլ ապօրինի եղանակ* ասելով՝ պետք է հասկանալ կեղծ տվյալի հայտնում կամ կեղծ փաստաթղթի ներկայացում չհանդիսացող ցանկացած այլ եղանակ: Օրինակ՝ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար ընտրական հանձնաժողովի անդամի միջոցով քվեաթերթիկ ստանալը, ընտրողների ցուցակի համապատասխան սյունակում կեղծ ստորագրություն կատարելը և քվեաթերթիկ ստանալն ու քվեարկելը:

Այդ առումով հարկ է նկատել նաև, որ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, որպես կանոն, տեղի է ունենում քննարկվող գործընթացների իրականացման համար պատասխանատու անձանց

մասնակցությամբ, նրանց աջակցությամբ:

Վերջիններիս գործողությունները, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, պետք է որակել որպես ՀՀ քր. օր.-ի հոդված 214-ով նախատեսված հանցագործության օժանդակություն: Ընդ որում, նման դեպքերում նշված օժանդակությունը դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելով կամ լիազորություններն անցնելով: Հետևաբար, վերջինիս արարքը լրացուցիչ (հանցագործությունների համակցությամբ) պետք է որակել քր. օր.-ի հոդված 441-ով:

Քր. օր.-ի հոդված 214-ով նախատեսված հանցակազմը **ձևական է**. հանցագործությունն ***ավարտված է*** համարվում մեկից ավելի (առնվազն երկրորդ) անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու (քվեաթերթիկը քվեատուփի մեջ գցելու) պահից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ, իսկ դրա **սուբյեկտն** ընդհանուր է՝ ***16 տարին*** լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ, ով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն մասնակցել է քվեարկության:

Քր. օր.-ի հոդված 214-ի 2-րդ մասով նախատեսված է տվյալ հանցագործության ***ծանրացնող*** մեկ հանգամանք. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ***մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:*** Այն, ինչպես արդեն նշվել է, պարզաբանվել է սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

§1.6. Քվեարկության գաղտնիությունը խախտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 215)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***հանրաքվեի (այդ թվում՝ տեղական) կամ ընտրությունների անցկացման ընթացքում քվեարկության գաղտնիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 6-ի (Քվեարկության գաղտնիությունը) համաձայն՝ «Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է»: Նույն օրենսգրքի հոդված 67-ի (Քվեարկությունը) 6-րդ մասի համաձայն՝ «Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում»:



Համանման դրույթներ են պարունակում նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդվածներ 2-ը (Հանրաքվեն և դրա անցկացման սկզբունքները), 24-ը (Հանրաքվեի քվեաթերթիկը, քվեարկության ծրարը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, կնիքները, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը և քվեատուփը) և 25-ը (Քվեարկության նախապատրաստումը), ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 2-ը (Տեղական հանրաքվեն և դրա անցկացման սկզբունքները) և 20-ը (Տեղական հանրաքվեի քվեաթերթիկը, քվեարկության ծրարը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, կնիքները, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը և քվեատուփը):

Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է քվեարկության գաղտնիությունը ***խախտելուն ուղղված գործողություններով***, որոնք դրսևորվում են՝

1. քվեարկողի կողմից՝

- բաց՝ այլ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար տեսանելի ձևով քվեարկելով,
- շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկությունը հրապարակելու միջոցով խախտելով (հոդված 215-ի 1-ին մաս),

2. այլ անձի կողմից՝

- ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելով,
- քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողի քվեարկած քվեաթերթիկը ստուգելով կամ քվեարկության խցիկ մուտք գործելով կամ
- քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելով (հոդված 215-ի 2-րդ մաս):

Այն դեպքերում, երբ ընտրողն իր քվեարկության գաղտնիությունը խախտում է, օրինակ՝ համապատասխան արդյունքի մասին բանավոր հայտնելով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով, այլ ոչ թե նշված քվեարկության

արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկությունը հրապարակելու միջոցով, արարքը ***չի կարող*** քրեական պատասխանատվություն առաջացնել: Քրեորեն ***պատժելի չէ*** նաև քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկությունը հրապարակելու միջոցով խախտելը, որը կատարվել է առանց շահադիտական (նյութական օգուտ ստանալու) նպատակի:

Ընտրողին ***քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը*** կարող է դրսևորվել, օրինակ՝ անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով, շանտաժով, ընտրողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, նրան պատկանող գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով և այլն: Ցանկացած դեպքում, երբ հարկադրելու այս կամ այն եղանակն ինքնուրույն հանցակազմի հատկանիշներ է պարունակում, որով քննարկվող հանցակազմի համեմատ հավասար կամ ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսված, արարքը պետք է որակվի համապատասխան հանցագործությունների համակցությամբ:

Օրինակ՝ երբ ընտրողին հարվածներ հասցնելով կամ նրա առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքով վերջինիս հարկադրում են հայտնել իր քվեարկության արդյունքը, արարքը պետք է որակել քր. օր.-ի ***միայն հոդված 215-ով***: Մինչդեռ, եթե քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը դրսևորվում է, օրինակ՝ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս կամ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով, արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ քր. օր.-ի հոդվածներ 215-ով և, համապատասխանաբար, 166-ով, 167-ով կամ 196-ով:

Քվեարկության գաղտնիությունն ***այլ կերպ խախտելը*** կարող է դրսևորվել, վերը քննարկվածներից բացի, այնպիսի իրադրություն ստեղծելով, երբ որևէ այլ անձ հնարավորություն է ունենում հսկողություն իրականացնելու ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ: Օրինակ՝ դա կարող է կատարվել քվեարկության խցիկում տեսաձայնագրման սարքավորում տեղադրելով, քվեարկողին տարբեր խոստումներ տալով կամ նյութապես շահագրգռելով,

ընտրատեղամասում քվեարկության խցիկ չտեղադրելով և այլն:

Քր. օր.-ի հոդված 215-ով նախատեսված հանցակազմը **ձևական է**. հանցագործությունն ***ավարտված է*** համարվում քվեարկության գաղտնիությունը վերը նշված որևէ եղանակով խախտելու պահից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ: Բանն այն է, որ համապատասխան գործողությունները տվյալ դեպքում պետք է կատարվեն հենց քվեարկության գաղտնիությունը խախտելու, դրա արդյունքը բացահայտելու նպատակով: Հակառակ պարագայում տվյալ հանցակազմը բացակայում է:

Քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսված հանցագործության **սուբյեկտն**, ինչպես արդեն նշվել է, ***հատուկ է՝*** քվեարկողը: Մինչդեռ, նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության սուբյեկտն ընդհանուր է՝ ***16 տարին*** լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

§1.7. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ հանձնելը կամ դրանք իրացնելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 216)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրությունների անցկացման, քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:



Տվյալ հանցագործության **առարկան** այն ընտրական քվեաթերթիկն է, քվեարկության ծրարը, դրոշմանիշը կամ կտրոնը, որը ***կեղծ է***, այսինքն՝ իրականությանը չհամապատասխանող, կեղծված, խաբեություն պարունակող, ճշմարտությունը խեղաթյուրող, մոլորության մեջ գցող: Այդ առումով՝ քննարկվող հանցակազմի իմաստով խնդրահարույց է հոդված 216-ի 1-ին մասում, մի դեպքում, ***«կեղծ ընտրական քվեաթերթիկ (...)»***, մյուսում՝ ***«ակնհայտ կեղծ քվեաթերթիկ (...)»*** հասկացությունների օգտագործումը: Մասնավորապես, կարող է տպավորություն ստեղծվել, որ նշված դեպքերից առաջինում նկատի է ունեցվում ցանկացած, իսկ երկրորդում՝ միայն աչքով տեսանելի կեղծ քվեաթերթիկը: Այդուհանդերձ, երկու դեպքում էլ հարկ է հասկանալ ցանկացած քվեաթերթիկ, որի կեղծ լինելը գիտակցվում է հանցավորի կողմից, հաստատապես հայտնի է նրան՝ անկախ անզեն աչքով տեսանելի լինելուց:

Տվյալ հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

1. կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն պատրաստելով,

2. ակնհայտ կեղծ քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն հանձնելով,

3. որևէ այլ եղանակով կեղծ քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն իրացնելով:

Կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն ***պատրաստել*** ասելով՝ պետք է հասկանալ դրանց լրիվ կամ մասնակի կեղծումը: Ընդ որում, քննարկվող հոդվածի իմաստով, պատրաստել է համարվում ոչ միայն ընտրական քվեաթերթիկի, քվեարկության ծրարի, դրոշմանիշի կամ կտրոնի որևէ ռեկվիզիտ փոխելը, այլև նախատեսված քանակից ավել դրանք թողարկելը: Օրինակ՝ երբ տպարանի աշխատակիցը տպագրում է նախատեսված թվից ավելի ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն, հետագայում դրանք իրացնելու նպատակով:

Կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն ***հանձնելը*** տվյալ դեպքում նշվում է որպես իրացման եղանակ, որը նշանակում է մեկ ուրիշին (ոչ իրավասու անձի) դրանք տալ, փոխանցել, նրա տրամադրության

տակ դնել, վերջինիս տնօրինությանը թողնել, նրան ի պահ տալ:

Կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն ***իրացնելու այլ եղանակ*** ասելով՝ տվյալ դեպքում հասկացվում է հանձնելուց բացի ցանկացած այլ ձևով դրանք շրջանառության մեջ դնելը: Օրինակ՝ որևէ թեկնածուի «կողմ» ձայների քանակն ավելացնելու համար դրանք վերջինիս կողմնակիցներին վաճառելը կամ նվիրելը և այլն:

Կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն հանձնելով կամ որևէ այլ ձևով դրանք իրացնելով կարող է զբաղվել ինչպես պատրաստողը, այնպես էլ այլ անձինք: Արարքի քրեաիրավական որակման առումով դա որևէ նշանակություն չունի:

Քր. օր.-ի հոդված 216-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է **ձևական** հանցակազմով, այսինքն՝ տվյալ հանցավոր արարքն ***ավարտված է*** համարվում, համապատասխանաբար, կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն պատրաստելու կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն հանձնելու կամ այլ եղանակով դրանք իրացնելու պահից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ:

Տվյալ հանցավոր արարքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև **շարժառիթը՝** անձնական (այդ թվում՝ շահադիտական) դրդումները կամ խմբային շահերով առաջնորդվելը:

Անձնական շահագրգռվածությունը (դրդումը) կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Դրանք են՝ կարիերիզմը, հովանավորչությունը, իրականությունը հանցավորի համար բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու ցանկությունը, փոխադարձ ծառայության մատուցում ակնկալելը և այլն: Անձնական դրդումների դրսևորում է նաև նյութական շահագրգռվածությունը՝ նյութական օգուտ ստանալու ձգտումը:

Խմբային շահագրգռվածությունը կարող է դրսևորվել ընկերական, գործընկերային, կուսակցական, կլանային կամ այլ խմբերի շահերը պաշտպանելու կամ առաջ մղելու ցանկության ձևով:

Քր. օր.-ի հոդված 216-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ ***16 տարին լրացած*** յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Քննարկվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված են կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ պատրաստելու կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ հանձնելու կամ դրանք իրացնելու ***ծանրացնող հանգամանքները***. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) ազդեցություն է ունեցել ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների վրա կամ

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Ընտրությունների կամ հանրաքվեի ***արդյունքների վրա ազդեցություն ունեցող*** տվյալ դեպքում կարող են համարվել կեղծ ընտրական քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն պատրաստելու կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկ, քվեարկության ծրար, դրոշմանիշ կամ կտրոն հանձնելու կամ այլ եղանակով իրացնելու այն դրսևորումները, որոնք աղավաղում են անձանց ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրացման ընդհանուր պատկերը և հնարավորություն չեն տալիս միանշանակ եզրակացության հանգել նշված գործընթացների վերջնական արդյունքների վերաբերյալ: Ընդ որում, նշված հանցավոր արարքների ազդեցության գնահատման հիմնական չափանիշը հետևյալ հարցի պարզաբանումն է՝ արդյոք դրանք առանձին վերցրած կամ միասնաբար կարող էին ազդել ընտրության կամ հանրաքվեի արդյունքների վրա: Հանցանքը ***մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ*** կատարելու էությունն ու առանձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է, մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում: Քր. օր.-ի հոդված 216-ի 3-րդ մասով նախատեսված է քննարկվող հանցագործության **առավել ծանրացուցիչ** մեկ հանգամանք. նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ***հանցավոր կազմակերպության*** կողմից: Այն նույնպես պարզաբանվել է սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

§1.8. Ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ առարկաները հափշտակելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 217)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Քր. օր.-ի հոդված 217-ով նախատեսված է նաև հանցագործության **առարկան**. քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, Կառավարության

կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության տեղադրած տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը և ընտրական փաստաթղթերի փաթեթը: Ընդ որում, նշված առարկաների ցանկը սպառիչ է: Այսինքն՝ ընտրական գործընթացի պատշաճ ապահովման համար անհրաժեշտ որևէ այլ առարկա (օրինակ՝ կնիքի թանաքը կամ բարձիկը և այլն) հափշտակելը չի կարող որակվել քր. օր.-ի հոդված 217-ով:

Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***գործողությամբ***՝ վերը նշված առարկաներից մեկը կամ մի քանիսը ***հափշտակելով***, այսինքն՝ հանցագործության առարկան ապօրինի հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով, եթե հանցավորն այն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Ընդ որում, հափշտակության եղանակը (գաղտնի, բացահայտ և այլն) արարքը քր. օր.-ի հոդված 217-ով որակելու իմաստով որևէ նշանակություն չունի:

Միևնույն ժամանակ, եթե ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ առարկաներ հափշտակելը կատարվում է անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքը ***խոչընդոտելու*** կամ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները ***կեղծելու*** նպատակով, արարքը պետք է որակել համապատասխան հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ երբ քվեարկության ավարտից հետո քվեատուփը հափշտակում են, որպեսզի ընտրական հանձնաժողովը հնարավորություն չունենա ամփոփելու տվյալ ընտրատեղամասում տեղի ունեցած ընտրությունների արդյունքները, արարքը որակվում է քր. օր.-ի հոդվածներ 210-ով և 217-ով:

Քր. օր.-ի հոդված 217-ով նախատեսված հանցակազմը ***նյութական է***. հանցագործությունն ***ավարտված է*** համարվում այն պահից, երբ հանցավորն իրական հնարավորություն է ունենում իր հայեցողությամբ ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու համապատասխան առարկան: Հետևաբար, եթե, օրինակ, հանցավորն ապօրինաբար տիրանում է ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորմանը, սակայն

ընտրատեղամասից դուրս գալիս նրան բռնում են, արարքը պետք է որակել որպես նշված առարկան հափշտակելու փորձ:

Քր. օր.-ի հոդված 217-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ:

Տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ է նաև **շարժառիթը՝** անձնական դրդումները կամ խմբային շահերով դրդված լինելը: Այն մանրամասն պարզաբանվել է սույն աշխատության նախորդ պարագրաֆի շրջանակներում:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ ***16 տարին*** լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Քր. օր.-ի հոդված 217-ի 2-րդ մասով նախատեսված է ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ առարկաները հափշտակելու **ծանրացուցիչ** մեկ հանգամանք. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ***մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:*** Այն, ինչպես արդեն նշվել է, մանրամասն պարզաբանվել է սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

Քր. օր.-ի հոդված 217-ի 3-րդ մասով նախատեսված է քննարկվող հանցագործության **առավել ծանրացուցիչ** մեկ հանգամանք. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ***իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:*** Այն ևս մանրամասն պարզաբանվել է սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

§1.9. Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 222)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրությունների կամ հանրաքվեի անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է հետևյալ արարքներից առնվազն մեկի կատարմամբ՝

1. վստահված անձին, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթին օրենքով սահմանված կարգով ծանոթանալուն ***խոչընդոտելով*** կամ
2. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ քաղվածքը ***չտալով:***

Վստահված անձի, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի, դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կողմից, համապատասխանաբար, ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերին ծանոթանալու, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ քաղվածքը տրամադրելու կարգն ու պայմանները սահմանված են «ՀՀ ընտրական օրենսգիրք» և «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքներով և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

Մասնավորապես՝ Ընտրական օրենսգրքի հոդված 32-ի (Դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, այցելուի իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները) 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումներից հետևում է, որ դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն, ի թիվս այլնի, ***իրավունք ունեն***՝

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնասոսնձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին,

2. ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում,

3. տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին,

4. չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների),

5. ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, ընտրողների ցուցակների, տեխնիկական սարքավորման ու քվեատուփի դիտարկման համար:

Համանման իրավակարգավորումներ են նախատեսված նաև վերը նշված մյուս օրենքներում:

Ըստ այդմ՝ ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերին ծանոթանալուն ***խոչընդոտելը*** կարող է դրսևորվել, օրինակ՝ նշված փաստաթղթերը չտրամադրելով, դրանց տրամադրումն անհարկի ձգձգելով, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տրամադրելով և այլն:

Ինչ վերաբերում է խոչընդոտելու էությանն ու առանձնահատկություններին, ապա դրանք, ինչպես արդեն նշվել է, մանրամասն պարզաբանվել են սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

ՀՀ քր. օր.-ի հոդված 222-ով նախատեսված հանցակազմը **ձևական է**. հանցագործությունն ***ավարտված է*** համարվում վստահված անձին, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթին օրենքով սահմանված կարգով ծանոթանալուն որևէ ձևով ***խոչընդոտելու*** կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ քաղվածքը տրամադրելը ***մերժելու*** պահից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ:

Տվյալ հանցագործության **սուբյեկտը հատուկ է**. այն անձը, ով օժտված է, համապատասխանաբար, ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթին օրենքով սահմանված կարգով ***ծանոթանալու հնարավորություն տալու*** կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ քաղվածքը ***տրամադրելու*** պարտականությամբ: Մասնավորապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համապատասխան ներկայացուցիչը:

§1.10. Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 223)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրությունների կամ հանրաքվեի անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Տվյալ հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է **անգործությամբ**՝ ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները ***չկատարելով*** կամ ***ոչ պատշաճ կատարելով:***



Քր. օր.-ի հոդված 223-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է **նյութական** հանցակազմով. հանցագործության պարտադիր հատկանիշ է հետևանքը՝ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ***ամփոփման անհնարինությունը:***

Օրինակ՝ Ընտրական օրենսգրքի հոդված 68-ի 4-րդ մասի համաձայն՝ «Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը քվեատուփից հանում է քվեարկության մեկ ծրար, ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար, քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը և հայտարարում քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե որ թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության օգտին է քվեարկված: (…)»: Այս եղանակով կատարվում է քվեաթերթիկների հաշվարկ: Ուստի, հանձնաժողովի նախագահի կողմից այս պարտականության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը կհանգեցնի հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփման անհնարինության, ինչն էլ պատասխանատվություն կառաջացնի քր. օր.-ի հոդված 223-ով:

Տվյալ հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի*** դիտավորությամբ:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտը հատուկ է՝** ընտրական հանձնաժողովի նախագահ հանդիսացող պաշտոնատար անձը, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը, տեղամասային ընտրական հանձնաժողովի դեպքում՝ հանձնաժողովի քարտուղարը:

§1.11. Զենքով տեղամասային կենտրոն մուտք գործելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 224)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրությունների կամ հանրաքվեի անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Օբյեկտիվ կողմից այն բնութագրվում է քվեարկության օրը ***զենքով ցուցադրաբար*** տեղամասային կենտրոն ***առանց ծառայողական անհրաժեշտության*** մուտք գործելով: Տվյալ արարքի քրեականացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ զենքով տեղամասային կենտրոն մուտք գործող անձն ապակայունացնում և անհարկի, ոչնչով չպայմանավորված լարվածություն է հարուցում տեղամասային կենտրոնում, ինչը կարող է հանգեցնել քվեարկողների գիտակցության, ընտրովի ներկայացուցչական մարմիններ ձևավորելու պատշաճ նախատրամադրվածության խաթարմանը և այլն:

Ընտրական օրենսգրքի հոդված 65-ով (Քվեարկության սկիզբը և կարգը) նախատեսված իրավակարգավորումներին համապատասխան՝ տեղամասային կենտրոն զենք, զինամթերքով մուտք գործելն արգելվում է: Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են ***միայն ոստիկանության*** ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

Քննարկվող հանցակազմի իմաստով կարևորվում է ***«տեղամասային կենտրոն»*** հասկացության ճշգրտումը: Այսպես, «ՀՀ ընտրական օրենսգիրք» և «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքներն ու «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը թեպետ չեն նախատեսում վերջինիս բնորոշումը, այդուհանդերձ, դրանցում առկա մի շարք իրավադրույթների համադրված վերլուծությունից պարզ է դառնում, որ տեղամասային կենտրոն է համարվում քվեարկության անցկացման համար նախատեսված, քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներով ապահովված և համայնքի ղեկավարի կողմից օրենքով նախատեսված կարգով սահմանված վայրը: Ընդ որում, որպես այդպիսին պետք է հասկանալ ինչպես քվեարկության խցիկը, այնպես էլ տեղամասային կենտրոնի սահմաններում գտնվող այլ տարածքները (օրինակ՝ քվեարկության համար կահավորված դահլիճը, սրահը, սենյակը, քվեատուփի տեղադրման վայրը և այլն):

Տեղամասային կենտրոն ***ցուցադրաբար*** մուտք գործել ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ ոչ միայն զենքը ձեռքում պահելով կամ այն թափահարելով, այլև որևէ այլ կերպ դրա առկայության մասին հասկացնելով (օրինակ, ձեռքը պատյանին դնելով քվեախցիկ մտնելը և այլն): Հետևաբար, պարզապես համապատասխան ծառայություն իրականացնող անձի մոտ զենքի առկայությունը, առանց այն ցուցադրելու կամ դրա առկայության մասին այլ կերպ հասկացնելու (օրինակ՝ երբ ոստիկանության զենք կրող ծառայողն ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով հանձնաժողովին աջակցելու նպատակով, առանց զենքը ցուցադրելու, մուտք է գործում տեղամասային կենտրոն), չի կարող պատասխանատվություն առաջացնել քր. օր.-ի հոդված 224-ով:

Ինչ վերաբերում է ***ծառայողական անհրաժեշտությանը***, ապա քննարկվող իրադրությունում այն կարող է առկա լինել միայն արարքի հանցավորությունը բացառող այս կամ այն իրավիճակում (օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, քր. օր.-ով նախատեսված հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու): Այսինքն՝ ծառայողական անհրաժեշ-տության մասին տվյալ դեպքում կարող են վկայել տեղամասային կենտրոնում հասարակական կարգին սպառնացող խախտումների կանխումը կամ վերացումը: Հետևաբար, ցանկացած այլ պարագայում զենքով քվեարկության խցիկ ցուցադրաբար մտնելու ծառայողական անհրաժեշտությունը բացակայում է:

Զենք ասելով՝ քննարկվող հոդվածի իմաստով պետք է հասկանալ միայն ծառայողական հրազենը կամ սառը զենքը, որը կրելու թույլտվությունն օրենքով սահմանված կարգով անձին վերապահված է:

Քր. օր.-ի հոդված 224-ի դիսպոզիցիայից բխում է նաև, որ տեղամասային կենտրոն զենքով ցանկացած մուտք չէ, որ առաջացնում է քրեաիրավական հետևանքներ: Անհրաժեշտ է, որ այդպիսի մուտքը իրականացվի՝

- քվեարկության օրը,
- ցուցադրաբար,
- առանց ծառայողական անհրաժեշտության:

Բացառապես նշված վավերապայմանների միաժամանակյա առկայության պարագայում է, որ արարքը կարող է որակվել նշված հոդվածով:

Քննարկվող հանցագործությունը նկարագրված է ձևական հանցակազմով. տվյալ հանցավոր արարքն ավարտված է համարվում քվեարկության օրը զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն առանց ծառայողական անհրաժեշտության մուտք գործելու պահից:

Քր. օր.-ի հոդված 224-ով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Քննարկվող հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ զենք կրելու իրավունք ունեցող և քվեարկության նորմալ ընթացքն ապահովելու որոշակի պարտականություններ ունեցող համապատասխան ծառայողը: Հետևաբար,

այն դեպքերում, երբ քվեարկության օրը զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն մուտք գործելը կատարում է այլ անձ (այդ թվում՝ պաշտոնատար, բայց ոչ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայող, ով գործում է քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ), արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, կարող է որակվել կա՛մ որպես ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտել (ՀՀ քր. օր.-ի հոդված 210), կա՛մ՝ խուլիգանություն (ՀՀ քր. օր.-ի հոդված 297), կա՛մ՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահել կամ լիազորություններն անցնել (ՀՀ քր. օր.-ի հոդված 441):

§1.12. Ընտրություններին մասնակցող թեկնածուին ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից հրաժարվելուն հարկադրելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 224.1)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***անձի ընտրվելու իրավունքի իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Տվյալ հանցագործությունից **տուժող** կարող է հանդիսանալ Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու կամ մեծամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի ***ընտրություններին մասնակցող թեկնածուն***: Որպես այդպիսին, բնականաբար, կարող են հանդես գալ միայն ***ընտրվելու իրավունք ունեցող*** անձինք, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիություն չունեցող:

Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի հոդված 80-ի (Ընտրվելու իրավունքը) 1-ին մասի համաձայն՝ «Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք»:

Նույն օրենսգրքի հոդված 82-ը սահմանում է, որ՝ «Ազգային ժողովի պատգամավորի ***թեկնածու չեն կարող առաջադրվել*** դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք»:

Ընտրական օրենսգրքի հոդված 107-ի (Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին առաջադրվող պահանջները) համաձայն՝

«**1.** Համայնքի ղեկավար և ավագանու անդամ կարող են ընտրվել սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ***ընտրելու*** իրավունք ունեցող անձինք:

2. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք»:

Միևնույն ժամանակ, նույն օրենսգրքի հոդված 2-ի 2-րդ մասի համաձայն՝

«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն

անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1. մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2. մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3. մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող)»:

Օբյեկտիվ կողմից ՀՀ քր. օր.-ի հոդված 224.1-ով նախատեսված հանցագործությունը բնութագրվում է վերը նշված ընտրություններին մասնակցող թեկնածուին ***ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից հրաժարվելուն հարկադրելով***:

Տվյալ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայից հետևում է, որ հարկադրանքի կոնկրետ եղանակ (դրսևորման ձև) նախատեսված չէ: Հետևաբար, այդպիսին կարող են համարվել ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից հրաժարվելուն պարտադրելու, ստիպելու հնարավոր բոլոր ձևերը: Միևնույն ժամանակ, սակայն, շանտաժով, անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ինչպես նաև նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով հարկադրելու դրսևորումները նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված են որպես ծանրացնող հանգամանքներ:

«Հարկադրել» հասկացության էությունն ու առանձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է, բացահայտվում են սույն աշխատության § 1.1.-ի շրջանակներում:

Ինչ վերաբերում է ***ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից***

հրաժարվելուն, ապա դրանց կարգն ու պայմանները սահմանված են Ընտրական օրենսգրքում:

Մասնավորապես, ***Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուին*** մանդատ տրամադրելու, ինչպես նաև նրա կողմից մանդատից հրաժարվելու և ինքնաբացարկ ներկայացնելու կարգն ու պայմանները նախատեսված են Ընտրական օրենսգրքի հոդված 100-ով (Մանդատների տրամադրումը պատգամավորներին): Այս հոդվածում տեղ գտած իրավակարգավորումներից հետևում է, որ՝

- թեկնածուներին մանդատների տրամադրումն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ՝ գրանցելով ընտրված Ազգային ժողովի պատգամավորներին,
- ընտրական ցուցակի առաջին մասից մանդատից հրաժարված կամ պատգամավոր ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում,
- կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված անձանց կողմից ներկայացված ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու դիմումները վավերացվում են նոտարական կարգով, կամ համապատասխան դիմումն անձը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում և այլն:

Նման կարգավորումներ են նախատեսված նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու և մեծամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի ընտրություններին մասնակցող թեկնածուի կողմից ինքնաբացարկ ներկայացնելու կամ մանդատից հրաժարվելու կապակցությամբ:

ՀՀ քր. օր.-ի հոդված 224.1-ի 2-րդ մասով, ինչպես արդեն նշվել է, նախատեսված են քննարկվող համագործակցության ***ծանրացնող հանգամանքները***: Մասնավորապես, նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1. շանտաժով,
2. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,
3. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
4. նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ
5. մի խումբ անձանց կողմից:

Նշված բոլոր հանգամանքների էությունն ու առանձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է, բացահայտվում են սույն աշխատության **§ 1.1.**-ի շրջանակներում:

ԳԼՈՒԽ 2
ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§2.1. Ընտրակաշառք ստանալը (ՀՀ քր. օր.-ի հոդված 218)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***ընտրակաշառք ստանալով***, այսինքն՝

- հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով,
- անձամբ կամ միջնորդի միջոցով, իր կամ այլ անձի համար,
- ընտրակաշառքի առարկան ստանալով, պահանջելով, տալու առաջարկ ներկայացնելով կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելով:

Ընտրակաշառք ասելով՝ նշված հոդվածի իմաստով պետք է հասկանալ այն բոլոր նյութական արժեքները, որոնք գին ունեն, մասնավորապես, գույքը (ինչպես շարժական, այնպես էլ անշարժ), ներառյալ դրամական միջոցը (այդ թվում՝ արտարժույթը), արժեթուղթը, վճարային այլ գործիքը (էլեկտրոնային փողը, վճարային հանձնարարականը, չեկը, քարտը և այլն), գույքի նկատմամբ իրավունքը, ծառայությունը, ինչպես նաև որևէ այլ (ոչ գույքային բնույթի) առավելությունը:

Քր. օր.-ի հոդված 218-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է **ձևական** հանցակազմով: Այն ***ավարտված է*** համարվում ընտրակաշառքի առարկան ստանալու, պահանջելու, տալու առաջարկ ներկայացնելու կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելու պահից՝ անկախ դրա դիմաց առաջադրված պայմանը կատարելու (տվյալ դեպքում՝ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու) հանգամանքից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ:

Տվյալ հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ հանրաքվեին կամ ընտրությանը ***մասնակցելու իրավունք ունեցող*** յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Այս առումով հարց է առաջանում. քվեաթերթիկն անվավեր դարձնելու պայմանով ընտրակաշառք ստանալու սուբյեկտ արդյոք չի կարող հանդիսանալ 16 տարին լրացած, սակայն 18 տարին չլրացած անձը (օրինակ՝ քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնելու նպատակով հրավիրվածը): Թեև տեսականորեն հնարավոր է նշված անձանց կողմից քվեաթերթիկն անվավեր դարձնելու պայմանով որևէ առավելություն ստանալը, սակայն դժվար է այն քննարկվող հանցակազմի տրամաբանությունից բխող արարք համարելը: Խնդիրը պարզապես այն է, որ քննարկվող հոդվածում օրենսդիրը չի կոնկրետացրել տվյալ հանցագործության սուբյեկտին:

Քր. օր.-ի հոդված 218-ի 2-րդ մասով նախատեսված է ընտրակաշառք ստանալու **ծանրացուցիչ** մեկ հանգամանք. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ***մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:*** Տվյալ հանգամանքի էությունն ու առանձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է բացահայտվել են սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ընտրակաշառք ստանալն ***ավարտված է*** համարվում այն պահից, երբ խմբի անդամներից թեկուզ մեկը ստանում է ընտրակաշառքի առարկան կամ պահանջում է այն կամ տալու առաջարկ է ներկայացնում կամ ընդունում է այն տալու առաջարկը կամ խոստումը: Այլ կերպ ասած՝ պարտադիր չէ, որ խմբի բոլոր անդամները շփման մեջ լինեն ընտրակաշառք տվողի հետ և անմիջականորեն նրանից ստանան գույք, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն. այն կարող է ստանալ խմբի թեկուզ մեկ անդամը, սակայն մյուսներին փոխանցելու պայմանով, եթե վերջիններս տեղյակ են այդ մասին:

[1]Օրինակ՝ Ընտրական օրենսգրքի հոդված [67]-ի (Քվեարկությունը) [9]-րդ մասի համաձայն՝ «Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

§2.2. Ընտրակաշառք տալը (ՀՀ քր. օր.-ի հոդված 219)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***ընտրակաշառք տալով***, այսինքն՝

- հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով.
- ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով.
- ընտրակաշառք առաջարկելով, խոստանալով կամ տալով:

Ընտրակաշառքի հասկացությունը բացահայտվել է սույն աշխատության նախորդ պարագրաֆի շրջանակներում:

ՀՀ քր. օր.-ի հոդված 219-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է **ձևական** հանցակազմով: Այն ***ավարտված է*** համարվում ընտրակաշառքի առարկան առաջարկելու, խոստանալու կամ տալու պահից՝ անկախ դրա դիմաց առաջադրված պայմանը կատարելու (հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու) հանգամանքից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ, իսկ դրա **սուբյեկտ** կարող է հանդիսանալ ***16 տարին*** լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Քր. օր.-ի հոդված 219-ի 2-րդ մասով նախատեսված է ընտրակաշառք տալու **ծանրացուցիչ** մեկ հանգամանք. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված

արարքը, որը կատարվել է ***մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:*** Վերջինիս առանձնահատկություններին ևս անդրադարձ է կատարվել սույն աշխատության նախորդ պարագրաֆի շրջանակներում:

§2.3. Ընտրակաշառքի միջնորդությունը (ՀՀ քր. օր.-ի հոդված 220)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:***



Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***ընտրակաշառքի միջնորդությամբ***, այսինքն՝

1. ընտրակաշառքի շուրջ ընտրակաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելով (օրինակ՝ նման ցանկություն ունեցողներին բացահայտելով և նրանց հանդիպացնելով ու անկաշկանդ զրուցելու, ցանկալի պայմանավորվածություն ձեռք բերելու համար պայմաններ ստեղծելով),
2. ընտրակաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում՝
   - ընտրակաշառքի առարկան ընտրողին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելով (օրինակ՝ այդ մասին սեփական նախաձեռնությամբ բարձրաձայնելով, պատրաստակամություն հայտնելով, ծառայություն առաջարկելով) կամ
   - այն փոխանցելու խոստում տալով կամ փոխանցելով կամ
3. ընտրակաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելով (օրինակ՝ ընտրակաշառքի առարկան փոխանցելու համար երրորդ անձանցից գաղտնի հանդիպում կազմակերպելով, այն փոխանցելու համար առավել նպաստավոր վայրի կամ ժամանակահատվածի վերաբերյալ խորհուրդներ տալով և այլն):

Ընտրակաշառքի հասկացությունը, տեսակները, դրանց էությունն ու առանձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է, բացահայտվել է սույն աշխատության §2.1.-ի շրջանակներում:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ քննարկվող հանցագործությունն անհրաժեշտ է սահմանազատել ընտրակաշառք տալու կամ ստանալու հանցակցությունից՝ օժանդակությունից:

Մասնավորապես, միջնորդն այն անձն է, ով նպաստում է ընտրակաշառք թե՛ տալուն, թե՛ ստանալուն՝ որպես միասնական գործընթացի: Այսինքն՝ ի տարբերություն միջնորդի, օժանդակողը կապված չէ ընտրակաշառակերության երկու կողմերի հետ և նրանց միջև կապող օղակ չի հանդիսանում:

Օժանդակողը նպաստում է կա՛մ ընտրակաշառք տվողի, կա՛մ ստացողի հանցագործությանը: Այսպես, օրինակ՝ ընտրակաշառք տալու կամ ստանալու օժանդակությունը կարող է դրսևորվել ընտրակաշառք տվողի համար դրամ հայթայթելով, հավանական ընտրակաշառք տվողներին կամ ստացողներին որոնելով, նրանց գտնելով, մատնացույց անելով և այլն:

Քր. օր.-ի հոդված 220-ով նախատեսված հանցագործությունը նկարագրված է **ձևական** հանցակազմով: Այն ***ավարտված է*** համարվում ընտրակաշառքի շուրջ ընտրակաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելու, ընտրակաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում ընտրակաշառքի առարկան ընտրողին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելու կամ այն փոխանցելու խոստում տալու կամ փոխանցելու կամ ընտրակաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելու պահից՝ անկախ որևէ հետևանքից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ:

Տվյալ հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ ***16 տարին*** լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Քր. օր.-ի հոդված 220-ի 2-րդ մասով նախատեսված է ընտրակաշառքի միջնորդության **ծանրացուցիչ** մեկ հանգամանք. նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ***իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:*** Հանցանքը նման հանգամանքներում կատարելու առանձնահատկությունները, ինչպես արդեն նշվել է, բացահայտվել են սույն աշխատության §1.1.-ի շրջանակներում:

§2.4. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 221)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***: Ընդ որում, նշված արգելքների նպատակը ընտրություններին կամ հանրաքվեին մասնակցողներին հավասար հնարավորություններ ապահովելն է:

Ընտրական օրենսգրքի հոդված 19-ի (Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները) 6-րդ մասի համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները»:

Համանման իրավակարգավորումներ են նախատեսված նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 17-ը (Քարոզչության հիմնական կանոնները) և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ը (Քարոզչության հիմնական կանոնները):

ՀՀ քր. օր.-ի քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

- ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշները կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և 3000 ՀՀ դրամը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութի կամ առարկայի) ***տալով (խոստանալով)*** կամ ***ծառայություններ մատուցելով (խոստանալով)*** կամ
- բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի ***քարոզչություն իրականացնելով:***

Նշված հոդվածով նախատեսված են նաև տվյալ հանցագործության ***եղանակները***. թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից ***անձամբ*** կամ ***նրանց*** (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) ***անունից*** կամ որևէ ***այլ եղանակով*** կամ ***բարեգործության անվան տակ:***

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև հանցագործության **ժամանակը**՝ հանրաքվեի կամ ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը):

Քր. օր.-ի հոդված 221-ով նախատեսված հանցակազմը **ձևական է**. հանցագործությունն ***ավարտված է*** համարվում ընտրողներին կամ հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշները կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և 3000 ՀՀ դրամը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութի կամ առարկայի) տալու (խոստանալու) կամ ծառայություններ մատուցելը սկսելու (խոստանալու) կամ բարեգործության հետ միաժամանակ

նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը սկսելու պահից՝ անկախ որևէ հետևանքից:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ: Դրա ***շարժառիթները*** կարող են տարբեր լինել: Պրակտիկայում վերջիններիս շարքում գերակայում է ընտրությունների կամ հանրաքվեի դրական արդյունքի հասնելու ձգտումը: Տվյալ արարքի որակման առումով, սակայն, հանցագործության շարժառիթը որևէ նշանակություն չունի:

Քր. օր.-ի հոդված 221-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտ** կարող է հանդիսանալ ոչ միայն թեկնածուն, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամը կամ լիազորված անձը, վստահված անձը, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամը կամ լիազոր ներկայացուցիչը, այլև նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից գործող ***16 տարին*** լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

§2.5. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 221.1)

ՀՀ քր. օր.-ի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության **անմիջական օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ***Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կատարելու, հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից կատարելու, հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրելու և հայտարարագիր ներկայացնելու ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են***:

Ընտրական օրենսգրքի հոդված 19-ի (Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները) 1.2-րդ մասի համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի կողմից համերգների, ներկայացումների, մարզական միջոցառումների, ֆիլմերի ցուցադրության և այլ միջոցառումների ֆինանսավորումը կարող է իրականացվել միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին»:

Նույն օրենքի հոդված 28-ի (Նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը) 1-ին մասի համաձայն՝

«Թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցություններն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ, Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների հերթական ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ: Հայտարարագրին կցվում են սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասում նշված, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով կատարված և հայտարարագրման ենթակա այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր և այլն):

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում երկրորդ փուլին մասնակցող կուսակցությունը նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն՝ ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ»: Համանման իրավակարգավորումներ են նախատեսված նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդվածներ 19-ը (Քարոզչության ֆինանսավորման

հիմնադրամը) և 20-ը (Քարոզչության ֆինանսավորման հիմնադրամում նվիրատվություն կատարելու կարգը), ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ը (Քարոզչության ֆինանսավորման հիմնադրամը և հիմնադրամում նվիրատվություն կատարելու կարգը):

ՀՀ քր. օր.-ի հոդված 221.1-ի 1-ին մասով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից ***խոշոր չափով չկատարելով*** կամ
- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրում քարոզչության նպատակով ձեռք բերված ապրանքը կամ մատուցված ծառայությունը ***շուկայական արժեքով չներառելով*** (եթե դա ձեռք է բերվել կամ մատուցվել է անհատույց կամ շուկայական արժեքից ցածր գնով կամ մինչև նախընտրական հիմնադրամի կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամի ձևավորումը), որը կազմել է ***խոշոր չափ:***

ՀՀ քր. օր.-ի նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ ***խոշոր չափ է*** համարվում 10 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը:

Քննարկվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կամ հանրաքվեի քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը քվեարկությունից հետո օրենքով՝ ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ***ոչ ուշ, քան 3 օր առաջ*** ընկած ժամանակահատվածում

չներկայացնելով: ՀՀ քր. օր.-ի հոդված 221.1-ով նախատեսված հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ***միայն ուղղակի*** դիտավորությամբ:Քննարկվող հանցագործության **սուբյեկտը հատուկ է**. համապատասխանաբար՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից ***կատարող*** կամ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ ***հայտարարագիր ներկայացնող*** ֆիզիկական անձը:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«ԿՈՆՐԱԴ ԱԴԵՆԱՈՒԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎԱՀԱՆԻ

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
քրեական իրավունքի ամբիոնի վարիչ

ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերստուգող սրբագրիչ՝ <<Կրեատիվ Լաբորատորիա>> ՍՊԸ

Համակարգչային ձևավորում՝ <<Կրեատիվ Լաբորատորիա>> ՍՊԸ

ISBN 978-9939-1-2267-0

9 789939 122670

ՀՏԴ **342.8(479.25):343.41**
ԳՄԴ **67.400.8(5Հ)+67.408.114.16**
Ա 706

ՀՏԴ **342.8(479.25):343.41**
ԳՄԴ **67.400.8(5Հ)+67.408.114.16**
ISBN 978-9939-1-2267-0

Տպագրված է <<Կրեատիվ Լաբորատորիա>> ՍՊԸ-ում
Հասցե՝ Ք. Երևան, Հալաբյան 7/2
Հեռախոս՝ +374 91 538453
Էլ. փոստ՝ info@creativelab.am